Անդամ Սինոդի ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Սիւնեաց վիճակի Դարաբաս գիւղացի, ի հասակի 42 ամաց ամուսնս 17 ին յետ կէս աւուր հանգեաւ ի Տէր իւր հայրենիքում, երկար ժամանակ տառապելով թոքախտութեամբ.

Հանգուցեալը 1857 թուին մտել է ի կուսակրօն հոգևորականութիւն Ս. Էջմիածնի վանքը.

1865 թ. Յունիսի 21 ին ստացել է սարկաւագութիւն. 1867 թ. Մարտի 20 ին ձեռնադրուել է Արեղայ. 1868 թ. նշանակուել է Երևանայ Հայոց Կոնսիստորիայի անդամ. 1869 թ. Օգոստոսի 15 ին նշանակուել է քննիչ Հին Նախիջևանի Հոգ. կառավարութեան գործոց. 1870 թ. 10 Սեպտմ. ուսուցիչ Երևանայ Հայոց թեմական դպրանոցի. 1872 թ. տեսուչ նոյն դպրոցի. 1873 թ. Օգոստ. 3 արձակուելով յիշեալ պաշտօններից՝ կարգուել է անդամ Սինոդի.

1873 թ. Յունվարի 20 կարգուեց ծախսարար Ս. Էջմիածնի և նոյն թուի Սեպտեմ. 20-ին անդամ վանքական կառավարութեան. որպիսի պաշտօնները վարեց ցՁ-ն Յունվարի 1875 թ. Սինոդի անդամութեան հետ.

1874 Դեկտմ. 2-ին ստանձնեց հսկողութիւն Սինոդի դիւանական գործավարութեան վերայ. նոյն թուին Մարտի 25 ին կարգադրութեամբ Սինոդի գնաց Տաթևու վանքը վանքի անշարժ կալուածներն ու գիւղօրայքը կապալաւ տալու.

1876 թ. Յունուարի 20 ից ցՅ ն Մարտի Գանձապահի բացակայութեան համար վարել է Մայր Աթոռոյս գանձապահի պաշտօնը.

1876 թ Մարտի 26 գնաց Թիֆլիս, տեղւոյն Հայոց կոնսիստորիայի հին անդամները փոխելու և նորերը կարգելու, նոյնպէս և

նոյն կոնսիստորիայի հաշիւներն ու հին գործերը քննելու, և Թիֆլիզու ու Ախալքալաքի վանքապատկան ու եկեղեցական անշարժ կայքերը կապալաւ տալու.

1878 թ. Մայիսի 20 ստացաւ չորրորդ աստիճան վարդապետական մասնաւոր իշխանութեան.

1879 թ. Յունվարի 9 ին նշանակուեց նախագահ վանքական կառավարութեան Մայր Աթոռոյս, նոյն թ. Մայիսի 27 ձեռնադրուեց Եպիսկոպոս և Յուլիսի 18-ին գնաց Թիֆլիզ Մայր Աթոռոյս կալուածները կապալաւ տալու.

Իւր պաշտօնավարութեանց ժամանակ 1871 թուին Մայիսի 10ին վարձատրուել է վարդապետական ականակուռ լանջական խաչով. 1873 թ. Յունիսի 25-ին ստացել է Հանգուցեալ Տէր Գէորգ Դ. Կաթուղիկոսից շնորհակալութեան կոնդակ. 1874 թ. Նոյեմբերի 10-ին վարձատրուել է ծաղկեայ փիլոնով.

Հանգուցեալը 1880 թուի Դեկտեմբեր ամսին արձակուելով վանքական կառավարութեան նախագահութեան պաշտօնից մինչև իւր մահը ունէր Սինոդի անդամութեան պաշտօնը.

Միաբանութիւնս խորին ցաւակցութեամբ ընդունեց հանգուցելոյ մահուան գոյժը և աղօթումէ առ Աստուած լուսաւորել հոգին և իւր սուրբերի ու սիրելիների հետ դասել երկնից արքայութեան մէջ.